

ԱՆԱԿԱՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊԵՏՏՐՈՊԱՎԱԼՈՎԵԱՆ ԱՄՐՈՑՈՒՄ⁽¹⁾

Ես, ոմբարքան մի մահուկ
Երկու ձեռքս պարզեցի...

ՄԻՔ. ԿԱԼ. ԲԱԼՆԻԿՈՎԱՆ

— Սա Սինեգուրի կամերն է, սա — Ֆիդների.
Այստեղ նստել է — Սագանավը եղող,
Կրապոտկի՞նն է նստել այս կամերում,
Բառումանն է նստել այստեղ մի օր:
Այսպէս, շարան-շարան, ստուերներ հին,
Հին անուններ — այնքա՞ն հերոսական,
Դէմքեր — ե՛ւ պարզ, ե՛ւ ջինջ, ե՛ւ սիրելի
Աչա կանգնում են իմ մաքի առաջ:
Սերունդներ են ամբողջ մի վեհ բանակ,
Շոնդալով անցնող յաղթական երթ,
Հերոսութեան, փառքի մի ճանապարհ անհաս,
Հիմայ դարձած անցած օրերի երդ...

Իսկ այս բակում աչա, ուր հիմայ մի
Նէնք կայ կանգնած ուրիշ, — այստեղ աչա
Այն բաստինն է հին ու ամեցի
Ցցուած եղել առաջ, որպէս պահակ
Արքաների փառքի ու ցոփութեան...
Հիւսիսային այն ցուրտ գեկտեմբերեան օրից,
Որ արշալոյն եղաւ այս օրերի,
Տառապել են այստեղ բազմութիւններ ուրիշ,
Բայց նոյնքան վեհ, անթիժ հերոսների:
Իմ ուղեղի միջնով հիմայ նրանք
Աչա անցնում են լուռ, խստաբարոյ,
Խարազմնի հետքեր մարմինների վրայ,
Բայց աչքերում վճիռ մի չմարտ:

(1) Զարենցի ալս բանասեղծութիւնը՝ ուր ա'յնքան զեղեցիկ կերպով
ոգեխոյւած է Միքայէլ Նալբանդեանի մեծ սուերը, կ'արտապեսի՛ «Նոր
Ուղի» ամսագրի 9—10 թիւն:

Մտաքերում եմ ես նրանց մէկ - մէկ,
 Ծիլեւից մինչեւ պայծառատես
 Այն մոսածողը զեհ ու հանճարեղ.
 Որին Մարքսն է մի օր անուանել Մեծ (1):
 Այս քարերի վրայ, այս պատերի.
 Որմնց նայել են այդ մարդիկ մի օր —
 Հայեացքների նրանց ու խաչերի
 Անանց հետքերն եմ ես փնտռում սիրով.
 Վաղուց արդէն թողել, հեռացել են նրանք,
 Որմէք ինձ հետ մտան բակն այս աշի, —
 Անխօս նայում եմ ես այս պատերին մուայլ,
 Շուրջո մութն է արդէն ու ամայի:
 Հրաժեշա եմ տալ իս արդէն նրանց,
 Շուռ եմ գալիս արդէն, որ գնամ ես —
 Երբ իջնում է յանկարծ ուսիս վրայ,
 Անախնկալ՝ իջնում է մի ծմբը ձեռք:—

Ես եմ նայում, վերեւ... թեքուած ուսիս՝
 Մի մարդ՝ գէմքով հեռու, անիրական, —
 Մտերմական ձայնով ասում է ինձ.
 — Դուք ինձ մոռացել էք, բարեկամ...
 Բարձրահասակ է, ջղուտ, աչքերը սեւ.
 Բակենքարդներ ունի, փոքրիկ մօրոււ: —
 Ես ո բտեղ եմ արդեօք նրան տեսել.
 Կեսանքում արդեօք, աենդում, թէ գրքերում:
 Վշանման ժպիս մի աշքերում՝
 Նայում է նա, նայում հայեացքն յառած.
 — Ի՞նչ է, — ասում է, — չէ՞ք մտաքերում
 Տարիներում այն մութի իմ բարբառած
 Շնորակալից երգերն ըմբոսառութեան մասին...
 Մաքառելով անցայ ուզին ես իմ,
 Պայքարելով այն սեւ բոնութեան դէմ, —
 Եւ պարձանք՝ կ'ասեմ, որ բարեկամ էի
 Ես Հերցենի, պօէտ Օգարեւի հետ...
 — Այ — զարմանում եմ ես, ճանաչելով նրան,
 Պալգում թեւերս, որ նրան գրկեմ, —
 Նո ողջունում է ինձ ու հեռանում արագ, —
 Ամայի բակն է լոկ լուսում իմ գէմ...
 Եղիծէ ԶԱՐԵՆՑ

1929, հոկտ. 18, Լենինգրադ

(1) Զերմիշեւսկի: